

Քաղաքացիների ընդունելություն Կապանում

Մարտի 27-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 81 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր վաթսուն, աշխատանքի տեղավորման միջնորդության համար՝ քսանմեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներին տրվել է դրական լուծում:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին մեկ դիմումի, քսան դիմում վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ